№ 6 (10)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2020

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

6 (10)

ԵՐԵՎԱՆ 2020
ЕРЕВАН 2020
YEREVAN 2020

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №6 (10). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2020. – 202 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

К ВОПРОСУ ОБ ОДНОРОДНЫХ ЧЛЕНАХ ПРЕДЛОЖЕНИЯ

Арменуи Мнацакановна Мхитарян
mkhitaryanarmenuhi@mail.ru

К.ф.н., доцент кафедры родного языка и методики его преподавания,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Те члены предложения, которые выполняют одну и ту же синтаксическую функцию, отвечают на один и тот же вопрос и однородны, называются однородными членами предложения. Однородными могут быть почти все члены предложения – и знаменательные, и служебные. Вопрос однородных знаменательных членов предложения специфичен. Однородные члены предложения могут быть связаны различными способами, могут быть выражены либо отдельными словами, либо словосочетаниями, либо словами и словосочетаниями одновременно. По количеству составляющих однородные члены предложения могут быть бинарными или быть представлены большим количеством элементов.

Ключевые слова: однородные члены, однородный, разнородный, главные члены, дополнения.

Բազմակի են կոչվում նախադասության մեջ այն անդամները, որոնք կատարում են նույն շարահյուսական պաշտոնը, պատասխանում են նույն հարցին և համասեռ են: Բազմակի անդամները իրար չեն լրացնում. գտնվում են համադասական հարաբերության մեջ և կապվում են թվարկման հնչերանգով: Եթե տվյալ նախադասության բազմակի անդամ-

ները լրացումներն են, ապա ավելանում է ևս մեկ հատկանիշ. դրանք լրացում են դառնում միևնույն անդամի (լրացյալի) համար: Եթե նախադասության բազմակի անդամները լրացումներ են, ապա դրանք համաստորադաս լրացումներ են, այսինքն՝ իրենց ընդհանուր լրացյալի նկատմամբ ստորադաս են, իսկ իրար նկատմամբ համադաս:

Նախադասության բազմակի անդամները համադասական բառակապակցություններ չեն կազմում, չնայած որ մի շարք բազմակի անդամներ կրել են փոփոխություններ, և տեղի է ունեցել բառիմաստի կայունացում: Այս փոփոխության շնորհիվ դրանք մոտեցել են բառակապակցությանը՝ ստանալով անվանողական գործառույթ [3: 16]:

Օրինակ՝ հայր ու մայր – ծնողներ, այր ու կին – ամուսիններ, այրուձի – հեծելազոր, տունուտեղ – ունեցվածք և այլն:

Հարկ է նշել, որ նույն նախադասության մեջ կարող են լինել շատ որոշիչներ, հատկացուցիչներ, խնդիրներ և պարագաներ, բայց դրանք բազմակի չեն համարվի, եթե չեն լրացնում միևնույն լրացյալին:

Օրինակ՝ Աստղազարդ գիշերներին լուսնկայի արծաթե շողերը նուրբ թելերով հեքիաթային շղարշներ էին հյուսում և պարուրում չքնաղ դղյակը:

Ինչպես տեսանք, վերոնշյալ օրինակի որոշիչները բազմակի չեն, քանի որ լրացնում են տարբեր լրացյալների:

Բազմակի չեն իմաստով մոտիկ, հոմանիշ բառերը, վերլուծական բարդությանները, հարադիր բայերը:

Օրինակ՝ Տեր – տնօրեն դու դարձար խորթ ու խոժոռ ցյուրիխում (ՊՍԱ, 156): Ոչ ու փուչ աշխարհ Սուտ ու փուչ աշխարհ (ՊՍ, 92): … Օղակ-օղակ երգ են կապում աղջիկ-տղա (ՊՍԱ, 112): Աշնան քամին մի հին մեղեդի է, որի հետ դատարկվող պաղ մայթերին պար են բռնել վաղուց պոկված և անհույս թափառող խենթ տերևները:

Նախադասության միևնույն բառի կրկնությունը ևս բազմակիություն չէ, այլ լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցներից մեկն է:

Օրինակ՝ Էո՞ւյս, լո՞ւյս զվարթ … Ոչ թե լույս երեկոյի … (ՊՍ, 11):

Կարող է կրկնվել նախադասության բայ – ստորոգյալը, որը ևս ոճական հնարանք է, որ հաճախ կարող է իմաստի սաստկացման միջոց լինել, կամ էլ կարող է ցույց տալ գործողության տևականություն:

Օրինակ՝ Ու պարում են – պարում – պարում հիմա Մեր փողոցում … (ՊՍ, 103):

Բազմակի կարող են լինել նախադասության գրեթե բոլոր անդամները՝ թե' գերադաս, թե' ստորադաս:

Բազմակի ենթականեր և ստորոգյալներ: Իհարկե, բազմակի գերադաս անդամների՝ ենթակաների և բազմակի ստորոգյալների հարցը մի փոքր տարբեր է բազմակի լրացումներից: Եթե բազմակի ենթականեր ունեցող նախադասությունը համարվում է պարզ, ապա մեկից ավելի ստորոգյալներ ունեցող նախադասությունը (այսինքն՝ մեկից ավելի ստորոգումներ պարունակող նախադասությունը) համարվում է բարդ նախադասություն:

«Նրանք, որոնք ենթական ու ստորոգյալը համարում են նախադասության համազոր գլխավոր անդամներ, գտնում են, որ ինչպես բազմակի ստորոգյալ, այնպես էլ բազմակի ենթակա ունեցող նախադասությունները բարդ նախադասություններ են: Այսպիսի դատողությունը հիմնված չէ իրական փաստի վրա: Ենթական ու ստորոգյալը նախադասության համազոր գլխավոր անդամներ են, բայց այս դեպքում դրանք հավասար մակարդակով հանդես չեն գալիս: Բազմակի ստորոգյալներից կազմված նախադասությունը բարդ է, իսկ բազմակի ենթականերից կազմվածը՝ պարզ: Մ. Աբեղյանը ճշտորեն տարբերակում է այդ տիպի նախադասությունները, բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունները համարում է միավորյալ, փաստորեն բարդ նախադասություն, իսկ բազմակի

ենթականերով նախադասությունը՝ միավորյալ անդամներ ունեցող պարզ նախադասություն» [1: 238]:

Օրինակ՝ Հարսներ, Աղջիկներ, Մայրեր, Մանուկներ Մերկացան իրենց արդուզարդերից, Հագան քուրձ (ՊՍԱ, 97):

Այս նախադասության մեջ հարսներ, աղջիկներ, մայրեր, մանուկներ ենթակաները բազմակի են, իսկ մերկացան, հագան ստորոգյալները՝ ոչ, քանի որ յուրաքանչյուր ստորոգյալ առանձին ստորոգում է, որն էլ բավարար հիմք է տալիս դրանք բարդ նախադասության առանձին բաղադրիչներ համարելու համար: Այսպիսի դեպքում բոլոր ստորոգյալներն արտահայտվում են նույն ժամանակով ու եղանակով և արտահայտում են գործողությունների միաժամանակություն կամ ժամանակների հաջորդություն: Այսպիսի դեպքերում օժանդակ բայը կարող է չկրկնվել:

Օրինակ՝ Լո՞ւյս, լո՞ւյս զվարթ, Շաղվի'ր, Մաղվի'ր, Թաղվի'ր այնպե'ս և այնքան խո՞ր … (ՊՍ, 12): Ճանապարհի բարակ, շիկափայլ թելը հետզհետե բարձրանում, հասնում էր հինավուրց ամրոցը:

Բազմակի գոյականական անդամի լրացումներ: Եթե բազմակի են ենթական, գոյականական անդամի լրացումներ հատկացուցիչն ու բացահայտիչը, բայական անդամի լրացումները, ապա դրանք կաղապարային նորություն չեն բերում, սակայն որոշչային բազմակիության և բայական անդամի լրացումներից ձևի պարագայի պարագայում որոշակի յուրահատկություններ են դրսևորվում. դրանք լինում են բազմակի՝ համասեռ (однородные определения) և տարասեռ՝ անհամասեռ (неоднородные определения):

Բազմակի որոշիչներ: Բազմակի են կոչվում այն որոշիչները, որոնք համասեռ են, այսինքն նույնաբնույթ են, և առանձին-առանձին լրացնում են միևնույն գոյականական անդամին: Հաճախ դրանք ցույց են տալիս միևնույն տեսակի առարկաները միմյանցից տարբերակող հատկանիշը կամ առարկայի մի քանի հատկանիշներ միանգամից: Նրանք իրար չեն

լրացնում. գտնվում են համադասական հարաբերության մեջ և կապվում են թվարկման հնչերանգով [4: 199–209]:

Օրինակ՝ Հմայված ու հմայիչ դիցուհին ափսոսում էր, որ ծովը հանգստավայր չունի (Թ, 35):

Տարասեռ որոշիչները, չնայած որ նույն անդամի լրացում են դառնում, կատարում են նույն շարահյուսական պաշտոնը, պատասխանում են նույն հարցին, նույնաբնույթ չեն և արտահայտում են տարբեր սեռային հասկացություններ [2: 210–211]: Տարասեռ որոշիչները չեն կարող միավորվել որևէ շաղկապով կամ էլ գրության մեջ տրոհվել ստորակետերով: Տարածված են հատկապես որակական և հարաբերական ածականներով կապակցությունները, որոնցում որակական ածականը վերաբերում է հարաբերականի գոյականական հիմքին [5: 62]:

Օրինակ՝ Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը (ԱԲ, 71):

Եթե որոշյալն ունի մի, ոչ մի, ամեն, ամբողջ, ողջ, ուրիշ, բոլոր, այսպես, այդպես, ինչ, այս, այդ, որպիսի, ինչպիսի, այնպիսի, նույն և առհասարակ թվական ու դերանվանական որոշիչներ, դրանք ևս տարասեռ են [1: 246]:

Օրինակ՝ Դռները բացվեցին, ներս վազեցին Ավալյանի զավակները՝ երկու պղնձագույն էակներ (Շ, 102): Գետն աղմկում էր առաջվա հանգով, նույն քարերն էին և նույն քարե արծիվը (ԱԲ, 4):

Տարասեռ են նաև այն որոշիչները, որոնք կապվում են այսինքն, ըստ որում բառերով [2: 211]:

Օրինակ՝ Նա երջանիկ ապրում էր փայտյա, ըստ որում խարխուլ մի տնակում:

Հաճախ նույն որոշյալին լրացնում են տարասեռ և բազմակի որոշիչները միաժամանակ՝ ստեղծելով քերականական բարդ կառույց:

Օրինակ՝ Ամե՞ն անգամ պաշարում է քեզ Նույն զգացումը՝ անճեղք ու անդուռ (ՊՍ, 132):

Բազմակի հատկացուցիչներ՝ Հակինթե վարդերի ու ծաղիկների բույրը ծովացել էր այնտեղ:

Հաճախ բազմակի հատկացուցիչները շփոթում են աստիճանավորված հատկացուցիչների հետ, որտեղ մի հատկացուցիչը լրացնում է մյուսին: Այս դեպքում հատկացուցիչները չեն տրոհվում:

Օրինակ՝ Ասմունքում է ԵՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի:

Բազմակի բացահայտիչներ՝ Ես՝ անվավեր խլիրտների թվացույց Եվ մասնագետ հոգեհարցման (ՊՍԵ, 73):

Որոշ լեզվաբաններ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերակցության դրսևորումներից մեկն են համարում նաև այն դեպքը, երբ բազմակի անդամները կարող են ունենալ ամփոփաբառ (обобщающее слово): Այն մյուս բազմակի անդամների հետ նույն իմաստային դաշտին է պատկանում, սակայն ունի ավելի ընդհանուր ամփոփող իմաստ, այսինքն՝ ունի ամբողջի իմաստ: Որպես ամփոփաբառ կարող են հանդես գալ որոշյալ դերանունները, դերանվանակազմ որոշ մակբայներ, գոյականներ և այլն: Ամփոփաբառը, ըստ դիրքի, կարող է լինել նախադաս կամ վերջադաս: Ավելի հաճախ այն նախորդում է բազմակի անդամներին, գրավոր խոսքում կարող է տրոհվել բութով կամ միջակետով: Հենց նախադասի դեպքերն էլ հաճախ շփոթություն են առաջացնում: Հազվադեպ ամփոփաբառը կարող է հաջորդել բազմակի անդամներին:

Օրինակ՝ Ամեն ինչ՝ և' ահասարսուռ լեռները, և' ձորերը մթամած, և' քարաձերպերը, ծածկվել են կանաչ վերմակով՝ զմրուխտ անտառներով: Մինչդեռ աշո՞ւնը Միայն բաշխում է՝ Ցորեն ու գարի, Խմիչք ու փշատ՝ Հազար մի բարիք (ՊՍԵ, 57):

Բազմակի ուղիղ խնդիրներ: Բազմակի ուղիղ խնդիրները կարող են լրացնել թե' դիմավոր, թե' անդեմ բայերին: Եթե լրացնում են անդեմ բայերին, ապա կոչվում են կողմնակի: Օրինակ՝ Երկնակարկառ լեռների արևահայաց լանջերին հաճախ կարելի է տեսնել վիթեր, այծյամներ տա-

բագույն: Նա թափառում էր սար ու ձոր՝ լսելու բնության երգերը հազարալեզու, կարկաչը աղբյուրների, շառաչը ջրընկեցների, հառաչը արտերի:

Բազմակի անուղղակի խնդիրներ: Սովորաբար, անուղղակի խընդիրները արտահայտվում են կա՞մ հոլովով, կա՞մ կապային կապակցությամբ: Բազմակի անուղղակի խնդիրները, որպես կանոն, համասեռ են լինում ոչ միայն գործառական իմաստով, այլ նաև իրենց արտահայտության ձևով, այսինքն՝ դրանք արտահայտված են լինում կամ միայն հոլովով, կամ միայն կապային կապակցությամբ: Հազվադեպ կարող են հանդիպել այս երկուսի զուգակցմամբ կապակցված բազմակի լրացումներ:

Բայական անդամի բազմակի անուղղակի խնդիրների տարբեր օրինակներ՝ Եվ սուրը նրա Դիպավ մեր խուփին, Մեր թարթիչներով զինավառ կոպին, Մեր մամիկների ասեղին ճարտար, Մեր մանուկների հայացքին արդար, Մեր մանգաղների շեղբերին տոկուն, Մեր թոնիրների խաչերկաթներին. – Երբեք չմեռած հայկյան մեր ոգուն (ՊՍԱ, 97): Քանի՞ կիլովատ հոսանք ենք տվել Երեխաների մազերին փափլիկ ու թաթիկներին, Մեր սիրածների իրանին ճկուն, Ուսերին նկուն մեր տատիկների (ՊՍԱ, 31): Օդը անարատ Բույրով ու թույրով, լույսով է առատ (ՊՍԱ, 83): Երգել են նրանք մեր պտղած հողից, Գինուց, խաղողից, Մեր սրտի դողից, Երգել են նրանք մեր ցորեն հացից, Մեր խինդ ու լացից, Մարտում ընկածից (ՊՍԱ, 84): Բոլոր աշխատանքներից միակ օրհնվածը, ուր բազուկների ու մատների հետ սիրտն է գործում, և հոգնությունը ցավ չէ, այլ գույների, բույրերի անսահման վայելք:

Բազմակի պարագաներ: Բազմակի կարող են լինել բոլոր պարագաները: Բազմակի պարագաները կարող են արտահայտված լինել տարբեր կառույցներով՝ հոլովով, կապային կապակցությամբ, մակբայով ու հոլովով, ածականով ու հոլովով [2: 213]:

Բայական անդամի բազմակի պարագաների տարբեր օրինակներ՝ Քարափը նորից Իր քարայծիկի դունչիկն էր լիզում կիրճում ու սարում

(ՊՍԱ, 86): Այգաբացից այգաբաց, ճրագալուցից ճրագալուց այնտեղից լսվում էին անհոգ ծիծաղի զվարթ կարկաչը և անուրջ-երազների կապույտ առագաստների ծփանքը: Եվ … նո՞ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝ Առայժմ եթե ոչ ձեզ բոլորիդ, Ապա գոնե ինձ, միայն ի՞նձ համար … (ՊՍ, 9): Արդար նախանձից ու չարությունից Տե'ս, Լոլիկներն են մուգկարմիր դառնում (ՊՍԵ, 114):

Տարասեռ ձևի պարագա: Ինչպես արդեն նշել ենք, բայական լրացումներից ձևի պարագան յուրահատկություն է դրսևորում. լինում է համասեռ կամ տարասեռ (տարասեռ որոշիչների նմանությամբ): Տարասեռ ձևի պարագաները, չնայած որ նույն անդամի լրացում են դառնում, կատարում են նույն շարահյուսական պաշտոնը, պատասխանում են նույն հարցին, նույնաբնույթ չեն և արտահայտում են տարբեր սեռային հասկացություններ: Սրանք ևս չեն կարող միավորվել որևէ շաղկապով կամ էլ գրավոր խոսքում տրոհվել ստորակետերով: Դրանք համարվում են տարասեռ, եթե արտահայտվում են տարբեր խոսքի մասերով և, բացի դրանից, մի ձևի պարագան լրացնում է ստորոգյալին և մյուս ձևի պարագային միասնաբար [1: 252]: Նրանք մոլորվածի պես արագ-արագ հեռացան (ընդգծված ձևի պարագաները տարասեռ են, քանի որ արտահայտվել են կապական կառույցով և ձևի մակբայով): Հմմտ.՝ Ընկերների գալուց հետո նա շարունակեց պառկած մնալ անզգա, անշարժ, ընդարմացած (ընդգծված բառերը բազմակի ձևի պարագաներ են):

Միակազմ նախադասության բազմակի գերադաս անդամներ: Հազվադեպ բազմակի կարող են լինել նաև միակազմ նախադասությունների գերադաս անդամներ [2: 209]: Օրինակ՝ Խորհրդավոր գիշեր, հուշեր, անհամար խոհեր, մոռացված երազներ …

Բազմակի անդամների արտահայտությունը: Ըստ բաղադրիչների քանակի՝ նախադասության բազմակի անդամները կարող են լինել երկանդամ կամ բազմանդամ, այսինքն՝ երկու կամ ավելի անդամներ մի ներփակ խումբ են կազմում և միավորվում են մի այլ խմբի կամ առանձին

անդամի հետ: Գրավոր խոսքում տրոհվում են ստորակետերով կամ միավորվում են որևէ համադասական շաղկապով [1: 239]:

Օրինակ՝ Թերևս նա իր մայրական սրտով Իր մինուճարի ու մեր հանճարի Սև ցավը տաներ (ՊՍԱ, 13): Ու մեկ էլ հանկարծ Մոցարտն էր գալիս,Գեղեցիկ, ջահել, կայտառ ու խնդուն … (ՊՍԱ, 109):

Նախադասության բազմակի անդամները կարող են արտահայտված լինել թե՜ միայն բառերով, թե՜ միայն բառակապակցություններով, թե՜ այս երկուսի զուգակցումով: Վերջինիս պարագայում բազմակի համարվող եզրերից մեկը (կամ մի քանիսը) կարող է ունենալ լրացում(ներ) և հանդես գալ նրա(նց) հետ միասնաբար, որը որևէ կերպ չի խաթարում բազմակի անդամների շարքը:

Բառով արտահայտված բազմակի անդամներ՝ Վեհ քերթությամբ զարդարուն ետ ես տվել կրկին, Իբրև ցնորք, իբրև երգª անմահ ու լուսեղ (ԵՉ, 154):

Բառակապակցությամբ արտահայտված բազմակի անդամներ՝ Ու տեղներից վեր են թռչում Թիկունքը լայն, մեջքը բարակ, Բոյը թիլ – թիլ, Բեղը ծիլ – ծիլ Ջահել տղերք (ՊՍԱ, 57):

Բառով և բառակապակցությամբ արտահայտված բազմակի անդամներ՝ Մենք ենք՝ այնքան վայելուչ, Այնպես կոկի՜կ, հարդարվա՜ծ, Գոհարներով զարդարված, Չկշտացանք նայելով (ՊՍԱ, 154):

Բազմակի անդամների շարադասությունը: Նախադասության բազմակի անդամների (լրացումների) շարադասությունը իրենց լրացյալների նկատմամբ կարող է լինել տարբեր՝ նախադաս, հետադաս (առանց ընդմիջման) կամ խառը (այսինքն՝ լրացումների մի մասը կարող է դրվել լրացյալից առաջ, մյուսը՝ հետո՝ անհարկի կուտակումներից խուսափելու և խոսքն ավելի սահուն դարձնելու նպատակով), իհարկե, նախադասության գերադաս անդամների պարագայում շարադասության խնդիր չկա:

Նախադաս՝ Սիրո կապանքի ու տառապանքի Հարցերն են անվերջ պատասխան փնտրում (ՊՍ, 150):

Հետադաս՝ Ճեմարանի բակում արձակ, Որտեղ էլ որ աչք ես ածում՝ Զարմանալի հավաքածու Խոսվածքների, տարազների (ՊՍԱ, 13):

Խառը՝ Եվ ծույլ փռված ստվերները մարմնամսեղ Սկսում են իրենք իրենց մրսել … (ՊՍ, 11):

Բազմակի անդամների կապակցությունը: Բազմակի անդամները կարող են միավորվել որևէ համադասական շաղկապով (միավորիչ, հակադրական, տրոհական)՝ մենադիր և կրկնադիր (և, ու, թե, կամ, բայց, սակայն, և'…և', ո'չ…ո'չ, թե'…թե', կա'մ…կա'մ, ո'չ միայն…այլև և այլն):

Տարբեր շաղկապներով կապակցված օրինակներ՝ Ես՝ զարթնած արդեն, Բայց դեռ անլվա, Հեղուկով մի կուց, Որ պարգևում է ձնհալն անխուսափ, Նախ զովացնում եմ դեմքն իմ՝ հիվանդի (ՊՍ, 10): Կենտ աչքն է ճմլում արևը կրկին՝ Պաղ առավոտվա մաքուր լվացված, սակայն չարդուկված թաշկինակ-ամպով (ՊՍ, 114): Մի արյունոտ լռություն իջել էր երբեմնի աշխույժ կայնքով ապրող, իսկ այժմ իրական դժոխքի վերածված երկրամասի վրա: Ապշած աչքերով այստեղ էլ տեսավ Եթե ոչ արյունոտ նույն ահն ու մահը, Ապա երկվորյակ ախն ու վախը նույն, Նույն լացն ու կոծը, հառաչն ու վայը (ՊՍԱ, 89):

Բազմակի անդամները, շաղկապներից բացի, կարող են միավորվել նաև այլ խոսքի մասերով՝ դերանուններով, մակբայներով, որոնք հանդես են գալիս կրկնադիր գործածությամբ: Այսպիսի դեպքերում կրկնվող կապակցական բառը չի շեշտվում, բազմակի անդամներն էլ իրարից տրոհվում են ստորակետերով: Օրինակ՝ … Որպես երբեմնի մի քաղաքամայր, Որով անցել է տարանցիկ քամին՝ Նո'ւյն Չինգիզ խանը, Նո'ւյն Լենկ Թեմուրը, Միևնույն թո¯ւրքը (ՊՍ, 31):

Բազմակի անդամները կարող են կապակցվել շարահարությամբ՝ առանց շաղկապի՝ հնչերանգով (գրավոր խոսքում տրոհվում են ստորակետերով):

Շարահարությամբ կապակցված անդամների օրինակ՝ Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում – Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր (ԵՉ, 12):

Երբ նախադասության բազմակի անդամները երկուսից ավելի են, կարող են միավորվել վերոհիշյալ երկու եղանակներով միաժամանակ. նման դեպքերում շաղկապը դրվում է հիմնականում վերջին անդամից առաջ:

Օրինակ՝ Ու մեկ էլ հանկարծ Մոցարտն էր գալիս, Գեղեցիկ, ջահել, կայտառ ու խնդուն (ՊՍԱ, 109):

Այսպիսով՝ նախադասության այն անդամները, որոնք կատարում են նույն շարահյուսական պաշտոնը, պատասխանում են նույն հարցին և համասեռ են, կոչվում են բազմակի: Եթե լրացումները բազմակի են, ապա դրանք լրացնում են միևնույն լրացյալին. համաստորադաս լրացումներ են, այսինքն՝ իրենց ընդհանուր լրացյալի նկատմամբ ստորադաս են, իսկ իրար նկատմամբ համադաս: Բազմակի չեն իմաստով մոտիկ, հոմանիշ բառերը, վերլուծական բարդությանները, հարադիր բայերը, ինչպես նաև նախադասության միևնույն բառի կրկնությունը. վերջինս լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցներից մեկն է:

Բազմակի կարող են լինել նախադասության գրեթե բոլոր անդամները՝ թե' գերադաս, թե' ստորադաս: Իհարկե, բազմակի ենթակաների և բազմակի ստորոգյալների հարցը մի փոքր տարբեր է բազմակի լրացումներից: Եթե բազմակի ենթականեր ունեցող նախադասությունը համարվում է պարզ, ապա մեկից ավելի ստորոգյալներ ունեցող նախադասությունը համարվում է բարդ: Եթե բազմակի են ենթական, գոյականական անդամի լրացումներ հատկացուցիչն ու բացահայտիչը, բայական անդամի լրացումները, ապա դրանք կաղապարային նորություն չեն բերում, սակայն որոշչային բազմակիության և ձևի պարագայի դեպքում որոշակի յուրահատկություններ են դրսևորվում. դրանք լինում են բազմակի՝ համասեռ (однородные определения) և տարասեռ՝ անհամասեռ (неоднород-

ные определения): Բազմակի անդամները հանդես են գալիս միասնաբար և նույն շարահյուսական դերով, պատասխանում են նույն հարցին և նույնաբնույթ են, իսկ տարասեռները արտահայտում են տարբեր սեռային հասկացություններ՝ չնայած որ բազմակիների նման պատասխանում են նույն հարցին, լրացում են դառնում նույն անդամին և շարահյուսական նույն պաշտոնն են կատարում: Այսպիսի անդամները չեն կարող միավորվել որևէ շաղկապով կամ էլ գրության մեջ տրոհվել ստորակետով:

Նախադասության բազմակի անդամները կարող են կապակցվել զոդվածով կամ շարահարությամբ, կարող են արտահայտված լինել թե՛ միայն բառերով, թե՛ միայն բառակապակցություններով, թե՛ այս երկուսի զուգակցումով: Ըստ բաղադրիչների քանակի՝ նախադասության բազմակի անդամները կարող են լինել երկանդամ կամ բազմանդամ:

ЛИТЕРАТУРА

1. *Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.* Հայոց լեզու, հ. 2: – Երևան, 1975:
2. *Գյուլբուդաղյան Ս.* Ժամանակակից հայոց լեզու: – Երևան, 1988:
3. *Ճշմարիտյան Ժ.* Դերբայական դարձվածը արդի հայերենում: – Երևան, 1961:
4. *Միխթարյան Ա.* Նույն որոշյալին լրացնող մեկից ավելի բառով և բառակապակցությամբ արտահայտված որոշիչների փոխակերպումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1(624): – Երևան, 2009:
5. *Քոսյան Վ.* Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր: – Երևան, 1976:

СПИСОК СОКРАЩЕНИЙ

1. ԱԲ – Ակսել Բակունց Ալպիական մանուշակ: – Երևան, 1969:
2. ԵՉ – Եղիշե Չարենց, Երկեր: – Երևան, 1954:
3. Շ – Շիրվանզադե, Պատմվածքներ: – Երևան, 1986:

4. ՊՍ – Պարույր Սևակ, Եղիցի լույս: – Երևան, 1992:
5. ՊՍԱ – Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն: – Երևան, 1966:
6. ՊՍԵ – Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 2: – Երևան, 1972:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա.Մ. Մխիթարյան
mkhitaryanarmenuhi@mail.ru

Բ.գ.թ., Խաչատուր Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարանի
մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Նաշադասության այն անդամնեռը, որոնք կատարում են նույն շարահյուսական պաշտոնը, պատասշանում են նույն հարցին և համասեռ են, կոչվում են բազմակի: Բազմակի կարող են լինել նաշադասության գրեթե բոլոր անդամները՝ թե գերադաս և թե ստոնադաս: Բազմակի գերադաս անդամների հարցը յուրահատկություն է դրսևորում: Նախադասոիթյան բազմակի անդամները կարող են կապակցվել զոդվածով, կամ շարահարությամբ, կարող են արտահայտված լինել թե միայն բառերով, թե միայն բառակապակցություններով, թե այս երկու զուգակցումով: Ըստ բաղադրիչների քանակի՝ նախադասության բազմակի ամդամները կարող են լինել երկանդամ կամ բազմանդամ:

Բանալի բառեր՝ բազմակի անդամներ, համասեռ, տարբասեր, գլխավոր անդամներ, լրացումներ:

THE QUESTION OF HOMOGENEOUS MEMBERS OF A SENTENCE

A. Mkhitaryan
mkhitaryanarmenuhi@mail.ru

PhD, Associate Professor,
Associate Professor of the Department of Native Language and Methods of its Teaching
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Those sentence members that perform the same syntactic function, answer the same question, and are homogeneous, are called homogeneous sentence members. Almost all parts of a sentence can be homogeneous – both content and function words.
The question of homogeneous content parts of a sentence is specific. Homogeneous parts of a sentence can be connected in various ways, can be expressed either by separate words, or by phrases, or by words and phrases at the same time. By the number of components, homogeneous parts of a sentence can be binary or be represented by a large number of elements.
Keywords: homogeneous sentence parts, homogeneous, heterogeneous, main terms, objects.

Информация о статье:
статья поступила в редакцию 17 октября 2020 г.,
подписана к печати в номер 6 (10) / 2020 – 21.11.2020 г.